

**ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ**  
**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԻԼ**  
**ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2018**

**10-րդ դասարան**

Դեկտեմբերն էր: Արքայից արքան նստած էր փղոսկրյա քառակուսի թախտի վրա, որ զարդարված էր գեղեցիկ քանդակներով: Այս առավոտ հագել էր արյունագույն պատմուճան: Գլխին կրում էր փառավոր խույրը, որի առջևից մարգարտաշար նարոտներով կապված էր ոսկյա մի զարդ, որ փողփողում էր արեգակնային ճաճանչներով: Թեզանիքների վրա կապված էին ոսկյա ապարանջաններ: Աջ ուսից ձգված էր հմայքներով լի հմայիլը, որ զարդարված էր գույնզգույն խոշոր սուտակներով: Գայիսոնի փոխարեն երկու ձեռքում բռնած ուներ մի երկաթյա ծանր լախտ՝ գնդաձև գլխով: Նա գտնվում էր այն սրբազան ձորի մեջ, որը եղել էր կրոնների ու պաշտամունքների օրրան: Այդ ձորով անցնում էր Արածանին: Գետի նվիրական ավերի մոտ բարձրանում էր վեհապան՝ Նպատը, որի այրերում ճգնում էր հայոց Լուսավորիչը: Այժմ քրիստոնեության նախկին օրրանում բանակ էր դրել թշնամին: Մի խումբ նվագաձուներ սկսեցին հնչեցնել փողերը և դափել թմբուկները: Այդ միջոցին պարսից կարմրագգեստ դահիճները բերում էին հայոց չափահաս և անչափահաս զերիներին, խմբերով ածում փղերի առջև:

- 1.Տեքստից դ՛րս գրեք տրված բառակազմական կաղապարներով մեկական բաղադրյալ բառ՝ արմատ+արմատ+ածանց, արմատ+ հոդակապ+արմատ, արմատ+հոդակապ+ածանց, ածանց+արմատ+հոդակապ+արմատ: (2 միավոր)
  - 2.Նշե՛ք՝ որ լեզվից է առաջացել **դեկտեմբեր** ամսանունը. տվե՛ք ծագման մեկնաբանությունը: (3 միավոր)
  - 3.**Պատմուճան, խույր, նարոտ, թեզանիք, սուտակ, գայիսոն** բառերի իմաստները բացատրե՛ք կամ գրե՛ք մեկական հոմանիշ: (2միավոր)
  4. Տեքստում որո՞նք են **շաղափ, շառագույն, գուրգ, վաթան** բառերի հոմանիշները: (1 միավոր)
  5. Նշե՛ք **փող, ածել, գերի** բառերի համանուն շարքերը և բացատրե՛ք իմաստները: (2 միավոր)
  - 6.Գրե՛ք **Արածանի, Նպատ, Գրիգոր Լուսավորիչ** հատուկ անուններին վերաբերող շրջասությունները: (3 միավոր)
  - 7.Տեքստում **հայոց** և **պարսից** բառերը ինչ խոսքի մասի արժեքով են գործածված: (1 միավոր)
  - 8.Տեքստի վերջին նախադասությունը հարստացրե՛ք վերաբերմունքային իմաստ արտահայտող 2 բառով: (1 միավոր)
- Բ. Շարադրություն՝ «Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ» վերնագրով (երկու էջի սահմաններում) :** (5 միավոր)

**Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Գ.Խալաթյան**